Պարույր Սևակ

Հավատում եմ

Հաճախ սիրում եմ,
Երբ մարդկայնորեն սիրտըս գերում են:
Հաճախ լռում եմ,
Երբ ճիշտ ասածըս դիտմամբ ծռում են:
Նաև խղճում եմ,
Եթե զղջում են:
Հիասթափվում եմ,
Եթե խաբվում եմ:
Նաև ատում եմ,
Եթե ստում են:
Բայց ամենի՛ց խոր
Ես հավատո՞ւմ եմ:
Ո՛չ միայն գիտեմ.
Ես հավատո՞ւմ եմ
Երկնի բացխուփիկ քողարկությանը,
Օվկիանոսների հավերժ կրկընվող խաղարկությանը,
Հավք ու թռչունի անբեկանելի ձվարկությանը:
Ո՛չ միայն գիտեմ.
Ես հավատո՞ւմ եմ,
Որ անհնար է արևը բանտել,
Երկնակամարի զարդերը քանդել,

Խմորի նման հունցել ու գնդել
Կապույտը ծովի,
Ատելի լուսնին բռնել վռնդել
Երկրնքից ծավի...
Ինչո՞ւ թաքցրնեմ,
Ես ճանաչում եմ ու գիտեմ մարդուն:
Ի՜նչ ասես չկա նրա փակ սրտում:
Գիտի կործանե՛լ,
Բայց և... գո՜րծ անել,
Մատնություն գրած նո՛ւյն իր ձեռքերով՝
Աշխարհը լցնել շռայլ բերքերով:
Նո՛ւյն այդ ձեռքերով՝
Ե՛վ ճրագ մարել,
Ե՛վ խարույկ վառել:
Նո՛ւյն այդ ձեռքերով՝
Ե՛վ դանակ խրել,
Ե՛վ վեպեր գրել:
Նա գիտի զարկե՛լ
Ու զրկե՜լ գիտի,
Բայց գիտի գրկե՛լ
Ու փրկե՜լ գիտի:
Նա գիտի կեղծե՛լ
Ու սրբապղծե՛լ,
Առավել ևս՝
Գիտի ստեղծե՜լ:
Ես նրան հաճախ դատափետում եմ,
Երբեմրն նրան նույնիսկ ատում եմ,
Բայց, ամենից շատ, խոր հավատո՜ւմ եմ:
Ես հավատում եմ նրա բնության ո՛չ թերությանը՝
Ստորությա՛նը

Ու չարությա՛նը,
Այլ խորությա՛նը
Ու բարությա՛նը.
Ո՛չ ծերությանը,
Այլ նորությա՛նը՝
Զավակի տեսքով անվերջ կրկընվող այդ հարությանը,-
Ես հավատում եմ կենդանի մարդուն,
Առավել՝ նրա ծնվելիք որդուն:
Ես հավատում եմ նրա անուրջին.
Նա որտեղ որ է Մարս էլ կթռչի,-
Նոր է սկըսում տիեզերական ճամփորդությունը:
Եվ Վեներայի լանջին կկառչի,-
Ես գիտեմ նրա տղամարդկային շանորդությունը...
Ես հավատում եմ նրա ծով խելքին
Եվ նույնիսկ՝ նրա հոտառությանը,
Ամե՛ն ինչ տեսնող աչքերի ցոլքին
Եվ նույնիսկ՝ նրանց մթարությանը:
Ես հավատում եմ նրա մատների
Հար անհատնելի
ճարտարությանը,
Նրա ոտների
արդարությանը.
Մինչև իսկ եթե ճամփից էլ հանեն՝
Էլի՛ ճար կանեն,
Տե՛ղ կհասցընեն...
Ես հավատում եմ հավատի՛ն մարդու՝
Իմ ա՛յս հավատին...

02.VI.1957թ.
Մոսկվա